ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ 2012

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների ուղեցույցի» (այսուհետ՝ Ուղեցույց) նպատակն է ոստիկանության գործողությունների պատշաճ ամրագրումը՝ ուղղված ընտրությունների բնականոն ընթացքի ապահովմանը:

2. Օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման օրինականության համար (ՀՀ ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մաս):

3. Ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների իրավական հիմքն են կազմում «ՀՀ ընտրական օրենսգիրքը», «Ոստիկանության մասին» օրենքը, սույն Ուղեցույցը և այլ իրավական ակտեր:

4. Ուղեցույցին կցված են ընտրական իրավունքի ոլորտի՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հանցագործությունների և ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված իրավախախտումների թվարկմամբ երկու հավելվածներ:

2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

5. Ոստիկանության ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ, իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական գործունեություն իրականացնել:

6. Ոստիկանության ծառայողը չի կարող առաջադրվել Ազգային ժողովի պատգամավորի, համայնքի ղեկավարի և անդամի, ինչպես նաև՝ Երևանի ավագանու անդամի թեկնածու:

7. Ոստիկանության ծառայողը չի կարող լինել ընտրական հանձնաժողովի անդամ և կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կամ թեկնածուների վստահված անձինք:

8. Նախընտրական քարոզչության ընթացքում ոստիկանության ծառայողներին (ինչպես և մյուս պետական և համայնքային ծառայողներին) արգելվում է իրենց վերապահված լիազորությունները գործադրել թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների միջև անհավասար պայմաններ ստեղծելու, կողմնակալություն ցուցաբերելու միջոցով ընտրողների կամքի ազատ արտահայտման վրա ներգործելու նպատակով:

3. ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

9. Համապետական ընտրությունների ժամանակ ՀՀ ոստիկանությունը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ՝ մինչ ժամը 14.00-ն, կազմում է քվեարկության օրն ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը՝ դրանում նշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը և օրը և հաշվառման վայրի հասցեն: Լիազոր մարմինը, ըստ այդ ցուցակների, ոստիկանության ծառայողներին հանում է իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ՀՀ ընտրական օրենսգրքի 9-րդ հոդվածով ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջներին համապատասխան՝ կազմում է ընտրական տեղամասում քվեարկող ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակ:

10. Լրացուցիչ ցուցակում ընդգրկված ոստիկանության ծառայողները քվեարկությանը մասնակցում են միայն համամասնական ընտրական համակարգով:

11. Ոստիկանության ծառայողները քվեարկությանը կարող են մասնակցել միայն իրենց անձնագրերով կամ անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթղթով՝ տրված լիազոր մարմնի կողմից:

4. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

12. ՀՀ ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: ՀՀ ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:(Տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 53-րդ հոդվածը):

5. ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Քվեարկության նախորդ օրը ընտրական տեղամաս գործուղված ոստիկանության ծառայողը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից պահպանման նպատակով ստանում է հատուկ չհրկիզվող պահարանը՝ քվեաթերթիկներով, քվեարկության ծրարներով, դրոշմակնիքով, հանձնաժողովի անդամների կնիքներով և այլ պարագաներով, որը փակված է և դռանը սոսնձված է հանձնաժողովի անդամների ստորագրությամբ թուղթ: Սույնի վերաբերյալ տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանում կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն՝ հանձնողի և ընդունողի միջև: Չհրկիզվող պահարանի և դռան վրա սոսնձված թղթի ամբողջականության համար պատասխանատվություն է կրում այն ընդունած ոստիկանության ծառայողը: Տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները քվեարկության օրը առավոտյան ժամը 07.^{00}-ին այցելում են տեղամասային կենտրոն և ներկայանում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

14. Արգելվում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Անկախ ընտրական

հանձնաժողովի պահանջից նշված օրենսդրական պահանջների կատարումն ապահովում է ՀՀ ոստիկանությունը:

15. Ոստիկանության ծառայողները չեն կարող քվեարկության օրը գտնվել քվեարկության սենյակում: Նրանք կարող են մտնել քվեարկության սենյակ բացառապես տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով և թույլտվությամբ (բացի քվեարկությանը մասնակցելու նպատակով սենյակ մտնելու դեպքի):

16. Արգելվում է տեղամասային կենտրոն զենքով, ռազմամթերքով մուտք գործելը:

17. Զինծառայողները, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում ծառայողները տեղամասային կենտրոն մուտք են գործում ոչ շարային կարգով, առանց զենքի, ռազմամթերքի:

18. Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքերում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են միայն ոստիկանության ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

19. Քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող գտնվել 15-ից ավելի քվեարկող: Քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար ընտրական հանձնաժողովի նախագահն իրավունք ունի ընտրողներին քվեարկության սենյակ թողնելու հերթով՝ մեկ-մեկ: Ընտրական հանձնաժողովի կողմից սույն պահանջի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ: Ոստիկանության ծառայողը քվեարկության սենյակի մուտքի մոտ կազմակերպում է քաղաքացիների հերթը՝ թույլատրելով մտնել քվեարկության սենյակ մեկ- մեկ:

20. Եթե քվերակության ներկայացած ընտրողի անձը հաստատող փաստաթղթում առկա է տվյալ ընտրությանը մասնակցելու մասին դրոշմակնիք, այսինքն՝ անձը փորձում է երկրորդ անգամ մասնակցել քվեարկությանը, ապա հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նախագահի միջոցով հանցագործության փորձի մասին տեղեկացնում է հերթապահող (ծառայություն իրականացնող) ոստիկանության ծառայողին:

21. Տվյալ դեպքում ոստիկանության ծառայողը մուտք է գործում քվեարկության սենյակ, տվյալ անձից կամ ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահից

պարզում այդ անձի ինքնությունը, ինչպես նաև՝ վերջինիս վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ հանդիսանալու հանգամանքը:

22. Եթե անձը չի հանդիսանում վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, ապա ոստիկանության ծառայողը նրան հեռացնում է քվեարկության սենյակից և անմիջապես տեղեկացնում ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին բերման ենթարկելու համար: Ոստիկանության ծառայողը նույն կերպ է վարվում ընտրական տեղամասում կատարված յուրաքանչյուր այլ հանցագործության դեպքում:

23. Եթե անձը հանդիսանում է վստահված անձ, դիտորդ կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, ապա ոստիկանության ծառայողը անմիջապես տեղեկացնում է ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը կատարված հանցագործության մասին: Համապատասխան պաշտոնատար անձը անհապաղ լուծում է քրեական գործ հարուցելու հարցը և քրեական գործ հարուցելուց հետո միայն տվյալ անձը կարող է հեռացվել քվեարկության սենյակից (ընտրական տեղամասից)՝ պայմանավորված նրա ձերբակալմամբ:

24. Վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի ձերբակալման կամ կալանավորման դեպքում, այդ մասին անհապաղ գրավոր իրազեկվում է համապատասխան ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահը:

25. Ոստիկանության ծառայողը չի կարող ներկա գտնվել քվեարկության արդյունքների ամփոփման նիստին:

26. Քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում՝ ամփոփման ընթացքի և արդյունքների վերաբերյալ ոստիկանության ծառայողը չի կարող ստանալ և որևէ եղանակով այլ անձի փոխանցել տեղեկություններ:

Հավելված 1.

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 149. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք՝

1) կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,

2) կատարվել են նյութապես շահագրգռելով,

3) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

5) կատարվել են մի խումբ անձանց կողմից,

6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից մինչև հինգ տարի ժամկետով: (149-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը

Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ

սխալ տվյալներով հաստատելը, քվեատուփ հափշտակելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

(150-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն օրենք)

Հոդված 151. Ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը

Ընտրողներին ապակողմնորոշելու նպատակով ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

(151-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 152. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը

Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին մատրելու համար սահմանված կարգը խախտելը, դրանք չտրամադրելը կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(152-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 153. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը

Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով: (153-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 154. Քվեարկության գաղտնիությունը խախտելը

Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով: (154-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 154.1. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը

1. Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ այլ եղանակով իրացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է խոշոր չափերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա: (154.1-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն օրենք)

Հոդված 154.2. Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը

Թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

Ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

(154.2-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 154.3. Ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը, կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելը

Ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում դրա համար պատասխանատու անձի կողմից չվերադարձնելը, ինչպես նաև կնիքի պահպանման համար սահմանված կարգը խախտելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

(154.3-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 154.4. Զենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը

Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն (քվեարկության խցիկ) մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

(154.4-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 154.5. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

(154.5-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 154.6. Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(154.6-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-166-Ն օրենք)

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հոդված 40.1. Քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը նախընտրական քարոզչություն կատարելը

Քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը նախընտրական քարոզչություն կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Նույն արարքը տեղամասային կենտրոնի շենքի ներսում, մուտքի մոտ կամ շենքի շուրջը բանավոր կամ գրավոր ձևով, երաժշտության կամ պատկերավոր միջոցների օգնությամբ, ստորագրությունների հավաքմամբ՝ ընտրողների կամաարտահայտման վրա ներազդելու միջոցով կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

Նույն արարքը զանգվածային լրատվության միջոցներով կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

(40.1-ին հոդվածը փոփ. 02.08.91, 02.09.93, 19.05.95, 19.03.99 ՀՕ-287, 26.05.11 ՀՕ-165-Ն օրենքներ)

Հոդված 40.2. Ընտրական հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը

Ընտրական հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

(նոր 40.2-րդ հոդվածը լրաց.19.03.99 ՀՕ-287, փոփ. 26.05.11 ՀՕ-165-Ն օրենքներ)

Հոդված 40.3. Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը

Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

(02.08.91, 19.05.95, 19.03.99 ՀՕ-287 օրենք)

Հոդված 40.4. Ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը

Ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

(40.4-րդ հոդվածը փոփ. 02.08.91, 02.09.93, 19.03.99 ՀՕ-287, 26.05.11 ՀՕ-165-Ն օրենքներ)

Հոդված 40.6. Ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանը չլրացնելը կամ ոչ պատշաճ լրացնելը

Ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանը չլրացնելը կամ ոչ պատշաճ լրացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի չափով:

(նոր՝ 2-րդ 40.6 հոդվածն ընդունվել է 19.03.99 ՀՕ-287 օրենք)

Հոդված 40.7. Զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված կարգը խախտելը

Զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ կուսակցությունների հիմնադրած մամուլի միջոցների, թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության իրականացման համար հավասար պայմաններ՝ եթերաժամ կամ ծավալ, սակագին և այլն չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից իրականացվող նախընտրական քարոզչության վերաբերյալ ակնհայտ կողմնակալ և (կամ) գնահատականներով տեղեկատվություն ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Օրենքով սահմանված կարգով որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների ավարտն ընկած ժամանակահատվածը, հեռուստառադիոընկերությունների աշխատակիցների կողմից հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) ընտրությունները լուսաբանելը և (կամ) հեռուստառադիոհաղորդում (հեռուստահաղորդում կամ ռադիոհաղորդում) վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստառադիոհաղորդումները (հեռուստահաղորդումները կամ ռադիոհաղորդումները) ապրանքների կամ ծառայությունների գովազդով ընդմիջելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

(40.7-րդ հոդվածը լրաց. 19.03.99 ՀՕ-287, փոփ. 26.05.11 ՀՕ-165-Ն օրենքներ)

Հոդված 40.8. Նախընտրական քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական քարոզչություն կատարելը և քարոզչական նյութեր տարածելը

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական քարոզչություն կատարելը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

(40.8-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն օրենք)

Հոդված 40.9. Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների հրապարակման համար օրենքով սահմանված կարգը խախտելը

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցում հրապարակելիս դրանում օրենքով նախատեսված տեղեկությունները չնշելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, հարցում իրականացնող կազմակերպության նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Քվեարկության օրվան նախորդող 7 օրվա ընթացքում, ներառյալ՝ քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով, հարցում իրականացնող կազմակերպության նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

(40.9-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն օրենք)

Հոդված 40.10. Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ընտրողներին դրամ, սննդամթերք, արժեթղթեր, պրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը)

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից անձամբ կամ նրանց անունից բարեգործության անվան տակ կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը), եթե դրա համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:

Բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երկուսուկեսհազարապատիկի չափով:

(40.10-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն օրենք)

Հոդված 40.11. Անանուն քարոզչական տպագիր նյութեր տարածելը

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական տպագիր նյութի պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ տեղեկություններ չպարունակող քարոզչական տպագիր նյութեր տարածելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

(40.11-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն օրենք)

Հոդված 40.12. Քարոզչական պաստառները պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

(40.12-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն օրենք)